

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
NATIONAL ACADEMY OF SCIENCES  
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԵՐԱՅԻ ՏՈՒՐՅԱԿ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ  
ԵՎ ՉԱՐԳԼՕՄԱԿ ՀԵՌԱԿԱՐՄԵՐԸ  
ARMENIAN STUDIES TODAY  
AND DEVELOPMENT  
PERSPECTIVES

Միջազգային համաժողով  
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.  
International Congress  
Yerevan, September 15-20, 2003



Ձեկուցումների ժողովածու  
Collection of papers



## ԱՐՈՎՅԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՆԵՐԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սամվել Մուրադյան  
Հայաստան

Հայ նոր գրականության սահմանազլխին մեր գրական միտքը միշտ էլ առանձնահատուկ կարևորություն է տվել ևս. Աբովյանին, որն իրականում աշխարհաբարի գրականացման, ազգային նոր գրականության բովանդակության, նրա ժանրային կազմի, կերպարաստեղծման ու պատկերավորման արվեստի բնագավառներում կատարել է անփոխարինելի դեր, ստեղծել է կենսունակ ավանդներ, առաջ է մղել մեր գեղարվեստական մտածողությունը և նախանշել նրա զարգացման ուղիներն ու հեռանկարները: Իզուր չէր Ավ. Իսահակյանը ևս. Աբովյանին համարում «մեր ամեն ինչի սկիզբը», և Վ. Տերյանը բանաձևում «Հայաստանի սիրտը Արարատյան դաշտը չէ», իսկ Աբովյանը՝ նրա ոգին: Իսկապես էլ, ստեղծագործական նոր սկզբունքների կիրառումով նոր բովանդակության մարմնավորման, նոր գաղափարների արծարծման, նոր հերոսների կերպավորման, արծակ և չափածո գրական նոր ժանրերի ստեղծման ճանապարհին նա խիզախորեն զնաց համաշխարհային ստեղծագործական փորձի յուրացման և ազգային ավանդների խաչաձևման ուղիով՝ ստեղծելով որակական աննախադեպ բարձր մակարդակ:

Աշխարհաբարով առաջին ազգային վեպը նա է ստեղծել, առաջին պատմվածքները, զվարճալի կարճ պատմությունները նա է գրել, առաջին մանկավարժական վեպը, չափածո առաջին առակները, առաջին բանաստեղծություններն ու բայաթիները, ուղեգրություններն ու ուսումնասիրությունները նրա գրչին են պատկանում: Բոլոր առումներով՝ Աբովյանը ժամանակակիցների և հաջորդների համար և՛ գաղափարական, և՛ գեղագիտական առաջնորդ էր, հայոց լեզվի, հայ ժողովրդի և հայրենի հողի միասնության, մեր ունահարված ազգային իրավունքների և արժանապատվության պաշտպանության առաջին ու հզոր պատգամախոսը:

Իս. Աբովյանի գլխավոր նպատակադրումը ազգության կյանքը հնարավոր բոլոր գրական ժանրերով ու տեսակներով ճշմարտացիորեն պատկերող, ազգության իդձերն ու երազանքներն արտացոլող, ժողովրդական լայն խավերի համար մատչելի գրականության ստեղծումն էր, գրականություն, որն ունենար թե՛ գեղագիտական արժեք, թե՛ դաստիարակչական ու ճանաչողական նշանակություն, ծառայեր մեր ժողովրդի լուսավորության ու առաջադիմության գործին: Իր այդ պատմական առաքելությունը նա կատարեց այնպիսի նախանձախնդրությամբ, որ ազգային մտածողության, հոգեբանության ու նկարագրի պատկերման, բովանդակ հայությանը մտահոգող համազգային խնդիրների արծարծման իմաստով դարձավ իրոք գրական ուսուցիչ, ունեցավ իրենով խանդավառված հետևորդների այնպիսի բանակ, որի շարքերում են Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանը, Ս. Շահագիզը, Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Գ. Սունդուկյանը, Բաֆֆին, Մուրացանը, Հ. Թումանյանը, Ավ. Ի-

սահակյանը, Սիամանթոն, Դ. Վարուժանը, Ե. Չարենցը, Բակունցը, Հ. Շիրազը, Հր. Մաթևոսյանը, որոնց մեջ են և՛ հետևողական ռեալիստներ, և՛ հետևողական ռոմանտիկներ, և՛ հետևողական արձակագիրներ ու բանաստեղծներ, երբեմն էլ՝ իրենց ուսուցչի նման երկուսը միասին: Իս. Աբովյանի սկզբնավորած ավանդները գոյատևում են 19-րդ դ. կեսերից և 20-րդ դարի միջով ձգվելով՝ հասնում են 21-րդ դար՝ միշտ պահպանելով իրենց թարմությունն ու արդիականությունը:

Մեզանում հայ գրականության պատմության հիմնահարցերը նոր-նոր են դիտարկվում գրական ազգակցության տեսանկյունից: Սույն գեկուցումն առաջիններից է, ուր մեր գեղարվեստական մտքի զարգացման ընթացքը, ևս. Աբովյանի և նրա նախորդների ու հաջորդների առնչությունները ներկայացվում են գրական ազգակցության տեսանկյունով, այսինքն՝ այն ընդհանուր հատկանիշների դիտարկումով ու բնութագրմամբ, որոնք դարաշրջանով, գրական ուղղությամբ, ոճով ու խառնվածքով տարբեր այդ գրողներին միավորում են մեկ միասնական հայ ազգային գրական ընտանիքում: Իսկ այդ միավորումը կատարվել է մեր ազգային կյանքի թելադրանքով: Անշուշտ, սա չի բացառում այլ գրականությունների հետ զուգահեռումներն ու առնչությունները և չի ենթադրում հայ գրականության մեկուսացում կամ կաղապարում միայն ազգային շրջանակների մեջ: Ընդհանրառակը, հենց ազգային հատկանիշների խորացված բացահայտումը նշանակում է նրա համամարդկային էության արժևորում:

Բնական հարց է ծագում. ի՞նչ էր ժառանգել ևս. Աբովյանն իր նախորդներից և ի՞նչ էր կտակում իր ժամանակակիցներին ու հաջորդներին:

Իր գեղարվեստական մտածողությամբ, գաղափարական հարցադրումներով նա ամենից առաջ հայոց հին և միջնադարյան գրականության օրինավոր ու արժանավոր զավակն է. նրա ստեղծագործության մեջ չի կարելի չտեսնել իր հեռավոր ու մոտիկ նախորդների՝ Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Մովսես Խորենացու ու Ղազար Փարպեցու և մյուս գրող-պատմիչների ազգապահ ոգին, Նարեկացու երկնառաք աղոթքների, միջնադարյան տաղերգուների շունչը, կլասիցիզմի բանաստեղծության կանոնիկությունը, հնագույն առասպելների ու վիպասանական երկերի, աշուղագուսանական բանաստեղծության, ժողովրդական հայտնի ու անանուն երգիչների կենսասիրությունը, այն ներշնչումները, որ ստացել էր նա իր անմիջական նախորդներ Հ. Ալամդարյանից ու Մ. Թադևոսյանից:

Աբովյանի գրական մուտքի շրջանում իրոք մեծ խզում էր առաջացել ընթերցողի ու գրականության, բուն ժողովրդական կյանքի և նրա արտացոլումը հանդիսացող գեղարվեստի միջև, քանի որ գերազանցապես տարաշխարհիկ, գաղթավայրերում ստեղծված հայկական կլասիցիզմի գրաբար գրականությունը քչերին էր մատչելի և ընդունելի ու դուրալի չէր ժողովրդի մարդկանց:

Շեղում չհանդուրժող կանոնները, գեղարվեստական սահմանափակ միջոցները բավարար չէին նոր ժամանակների կենսականորեն կարևոր հիմնախնդիրները պատկերելու համար: Ճգնաժամը հաղթահարելու լավագույն միջոցը լուսավորյալ ազգերի արվեստագետների կենսափորձի և ստեղծագործական նվաճումների յուրացումն էր, առաջավոր գաղափարների ու կենսաձևերի արմատավորումը հայ իրականության մեջ, ուր ազգանպաստ այս մեծ ծրագիրը կենսագործող հզոր անհատականություններ էին պետք, առաջավոր գաղափարներով զինված նվիրյալներ, որ կարողանային իրենց իմացություններն ու հմտությունները պատվաստել մեր իրականության մեջ, հայ կյանքի ընթացքը մղել դեպի լուսավորության և առաջադիմության հուն: Այդպիսի բացառիկ անհատ էր ևս. Աբովյանը: Նախ նա ինքն ապրեց ուսումնառության, ստեղծագործական բուռն որոնումների ու հասունացման մի տևական շրջան: Բայց որքան էլ նրա առաջին ուսուցիչները՝ Անտոն Մուղ-նեցին ու Պողոս Ղարաղաղին, նրան նախապատրաստել ու հմտացրել էին գրա-

բարի և հայոց մատենագրության իմացության մեջ, Էջմիածնի Գևորգյան ճեմարանն իր վանական անձուկ միջավայրով, անգամ առաջավոր Ներսիսյան դպրոցն իր գանազան սահմանափակումներով չէին կարող գոհացում տալ մեծ թրիչքների պատրաստվող երագուն պատանու տենչերին ու ձգտումներին: Տփղիսի Ներսիսյան դպրոցում, սակայն, արդեն կար մի լուսավոր առաջնորդ հանձին Յարություն Ալամդարյանի, որը կազմակերպեց նրա միտքը և նպատակամղեց դեպի ռուսական ու եվրոպական լուսավոր հորիզոններ:

Կլասիցիզմի պահանջներով Աբովյանի գրած առաջին ձոներգերը, աշուղական բանաստեղծության հետևողությամբ ստեղծվածները դեռևս լուրջ արժեքներ չէին, իսկ ուսումնաստենչ պատանին չէր կարողանում իրականացնել բարձրագույն կրթության իր մեծ երազանքը, մինչև նրա կյանքի ճանապարհին հրաշքի պես չհայտնվեց Դորպատի համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտը: Վերջինիս միջնորդությամբ ուսանող դարձած և արդեն Արարատի բարձունքներից աշխարհին նայող Խ. Աբովյանը դորպատյան տարիներին շփվեց մեծ աշխարհի հետ. Արևելքի ավանդների կողմը արդեն «գերմանացիի մը պես կիսուսեր գերմանիկ լեզուն», «մաղե անցուցեր էր» եվրոպական մեծ մտածողներին, հաղորդակից էր դարձել Գոմերոսին ու Պետրարկային, Շեքսպիրին ու Գյոթեին, Լայբնիցին ու Ժուկովսկուն, ընդլայնել էր իր մտահորիզոնն ու պատրաստ էր ազգային մտածողության ձևերն ընդելուզել ռուսական ու եվրոպական իրականության մեջ արմատավորված ձևերին՝ այդպիսով ձեռք բերելով գեղարվեստական մտածողության նոր որակ: Այդ նոր որակը աստիճանական զորեղացումով դրսևորվեց «Վերքից» առաջ գրված գործերում և իր լրումին հասավ նրա այդ հանճարեղ գլուխգործոցում: «Վերքի» ստեղծագործական պատմությունը ցույց է տալիս, որ Աբովյանն ինքը կամեցել է հասկացվել ժամանակակիցների ու սերունդների կողմից, հատկապես ջանացել է իր երկի էությունը, իր խիզախ ծրագրերն ու մտահղացումները պարզաբանել, իր «սրտի հասրաթը» հասկանալի դարձնել ընթերցողին: Այս անհրաժեշտության թելադրանքով է գրվել ու վեպի երկրորդ տարբերակում գետեղվել հանրահայտ «Յառաջաբանը», ուր պարզ ու մատչելի պատկերավորությամբ շարադրված են գեղագիտական այն նոր սկզբունքները, ստեղծագործական այն ծրագրերը, որոնց առաջին իրականացնողը հենց ինքը Խ. Աբովյանն էր:

Արդ, բովանդակային ու ձևական ի՞նչ նորություններ էր բերում հայ գրականության մեջ Խ. Աբովյանը և ինչպե՞ս էր ամրապնդում մեր նոր գրականության հիմնաքարերը՝ ներգործելով նրա զարգացման ողջ ընթացքի վրա:

Սկսած 19-րդ դ. երկրորդ կեսերից՝ արվյանագիտությունն այս ուղղությամբ կատարել է կողմնորոշիչ քայլեր. գնահատելի են հատկապես Մ. Նալբանդյանի, Ստ. Ոսկանի, Դովի. Թումանյանի, Արշակ Զոպանյանի, Ա. Տերտերյանի, Ն. Մուրադյանի, Պ. Դակոբյանի, Ա. Սարինյանի, Զր. Թամրազյանի դիտումները: Մեր նախորդներն, այդ, նկատել են Աբովյանի գրեթե բոլոր հիմնական բանաձևումները, որոնք առնչվում են նոր գրականություն ստեղծելու անհրաժեշտության գիտական հիմնավորմանը: Սակայն այսօր ամենից հանրահայտ թվացող հարցերն անգամ կարիք ունեն նոր պարզաբանումների ու բացատրությունների, որովհետև ժամանակների հեռվից յուրաքանչյուր նոր ուշադիր ընթերցում ու դիտում բացահայտում է իմաստային նոր նրբերանգներ, բովանդակային նոր կողմեր ու գծեր:

Խ. Աբովյանի բերած գրական – պատմական նորություններն ամենից դիպուկ ու պատկերավոր շարադրված են նրա հռչակավոր վեպի «հայ նոր գրականության հանգանակ» որակումով հայտնի «Յառաջաբանում»: «Յարիիր հազարին» հասկանալի ու մատչելի գրականություն ստեղծելու այդ ծրագիրը, սակայն, ամենևին էլ դյուրությամբ չէր իրականանալու. գրական հնացած ավանդույթը փշրելու, միայն «Աստծու, սրբերի և հրեշտակների վրա» եղած գրականությանը բուն ժողովրդա-

կան տարերքի կյանքը պատկերող ստեղծագործությամբ հակադրվելու, նոր խոսքը ընկալելի և ընդունելի դարձնելուն խոչընդոտում էին կարծրացած նախապաշարումները, բարոյահոգեբանական դժվար հաղթահարելի խնդիրները, որոնք կաշկանդում էին այդ հանճարեղ անհատականությանը իր մեծ մտահղացումներն իրականացնելիս: Բայց Աբովյանը կրակված սրտով, հզոր ներշնչանքով էր կպել գործի. նրա ներշնչանքի հզոր աղբյուրն իր պատմական մեծ անցյալ ունեցող, սակայն նոր ժամանակներում բազմավերք խոցված հայրենիքն էր. «Յայաստան առաջիս հրեշտակի պես կանգնած ինձ թև էր տալիս», - գրել է նա: Այս ներշնչանքով էր ստեղծվում 19-րդ դարի առաջին տասնամյակների հայ իրականության անկրկնելի գեղարվեստական պատմությունը, ստեղծվում էր ծանր երկունքով, հայ սերունդների և օտարների առջև պատմական իրադարձությունները ճշմարտացիորեն ներկայացնելու բարձրագույն պատասխանատվությամբ:

Միշտ գրականագետների ուշադրության կենտրոնում են եղել նոր սերունդներին այլևս անհասկանալի դարձած գրաբարի դեմ Աբովյանի ազնիվ ընդվզումները: Սակայն գրեթե շրջանցվել է նույն գրաբարի այդ «անգին գանձի» նկատմամբ Աբովյանի մյուս դիրքորոշումը. օտար տիրապետության պայմաններում հարյուրամյակներով հալածանքի ենթարկված ժողովուրդը, ըստ Աբովյանի, աշխարհաբար յուրացնելով միայն կարող էր դառնալ գրաբարի և նրանով ստեղծված գիտամշակութային մեծ արժեքների տերը: Այս միտքը նա ընդգծում է և «Վերքի», և մանավանդ «Պարապ վախտի խաղալիք» գրքի «Յառաջաբանում». «Շատ անգամ պարապ ժամանակս միտք էի անում, էնպես մեկ բան գրեմ, որ մեր խալխի սրտովն ըլի, բայց չէի գիտում, թե ինչ լեզվով գրեմ: Մեր գրաբար լեզուն անգին է, նմանը չունի, ինչքան լեզու էլ որ գիտեմ, էլա էն համը, էն քաղցրությունը, էն ճոխությունը չունի. բայց մեր վատ բախտիցը հազարիցը մեկը չի հասկանում, ինչ պետք է արած: Երանի՛ էն սիսթին, որ մեր ազգը քիչ-քիչ կարողանա էս կորած գանձը գտնիլ ու իր լեզուն սովորիլ, իմանալ»<sup>1</sup>:

Երկրորդ է, որ Աբովյանը մեծ կարևորություն էր տալիս լեզվի խնդրին. նրա համար «լեզուն դարտակ խոսք չի, այլ հոգին ա մարդիս»: Ավելին. «մեկ ազգին պահողն էլ լեզուն ու հավատն ա մարդիս. դրանք էլ որ չըլին ի՞նչ կըլի մեր օրը», - բանաձևում էր նա: Նալբանդյանը լեզվի և լուսավորության խնդիրը չմերժեց, բայց կենտրոնացավ տնտեսական կյանքի բարելավման վրա: Բաֆֆին չիրաժարվեց իր ուսուցիչների պատգամներից, բայց կանգ առավ ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսության և պատմական անցյալի նվիրյալ անհատների անձնագրիության օրինակով նոր սերունդներին դաստիարակելու անհրաժեշտության վրա: Այսպես շարունակվեց մեր գրականության մեջ հերոսականության գիծը՝ իր դրսևորումներն ունենալով Ռ. Պատկանյանի, Սիամանթոյի, Վարուժանի, Ե. Զարենցի և հաջորդների պոեզիայում:

Աբովյանը ողջ խորությամբ էր գիտակցում մայրենի լեզվով ստեղծվելիք գրականության ու արվեստի հոգեկերտիչ դերը, լուսավորության փրկարար նշանակությունը: Ու հենց սրանով է հասկանալի դառնում նրա բուռն ընդվզումը Յայաստանում այն ժամանակներում տարածում գտած թրքալեզու երգի ու բանաստեղծության դեմ և պայքարը հայեցի արվեստի իրավունքների վերահաստատման համար: Դիչենք, թե ինչպե՞ս էր նա դժգոհում մի թրքերեն երգող մի քոռ աշուղի հայիլ-մայիլ լսող ու իրենց սիրտն էլ ասես նրան տալու պատրաստ իր ազգակիցներից և ինչ նպատակով էր գրել շուրջ ութ տասնյակ իր հայերեն բայաթիները. «Բայաթիքը էն մտքով են գրել, որ չունքի մեջլսում, հացի վրա թրքեվար են էնպես բաներ ասում. լավ հայը հայեվար ասի, որ քիչ-քիչ լեզուն քաղցրանա, չունքի ոչինչ բան էնպես լեզուն չի քաղցրացնում, որքան խաղն ու տաղը»<sup>2</sup>:

Կենսականորեն անհրաժեշտ էր Աբովյանի հրատապ ստեղծագործական ծրա-

գրի իրականացումը, մեծ զոհողություններ պահանջող, իսկ հայ իրականության մեջ հենց նրան էր վերապահված դրա կենսագործման պատմական առաքելությունը:

Խ. Աբովյանի գլուխգործոցը՝ «Վերք Յայաստանին», լույս տեսավ հեղինակի մահից տասը տարի հետո՝ 1858 թվին, և նրանով էլ սկսվեց մեծ հեղաշրջումը մեր գրական-գեղարվեստական մտքի պատմության մեջ: Այդ վեպը ոչ միայն ցույց էր տալիս «մեր աշխարհի էն ժամանակվա հալը», ոչ միայն արծարծում էր սոցիալական խնդիրներ, պատկերում մարդկային ու հասարակական հարաբերությունները, հայ – ռուսական, հայ - պարսկական առնչությունները, այլև մատնացույց էր անում ազգի գոյատևման ճիշտ ճանապարհը, բարձրացնում հայության քաղաքական կողմնորոշման ու ազատության խնդիրը: Հենց նրանից ստացած ներշնչանքով 1860 - 70 - ական թթ. գրականություն մուտք գործեցին Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Բաժ-ֆին և մյուսները:

Բնական պետք է համարել վեպի առաջին գնահատողների տարածայնությունները վեպի բնույթի ու ժանրի շուրջ. արևելյան վեպ է «Վերքը», թե՞ գրված է եվրոպական վեպի կանոններով, ի՞նչ ուղի է այն ցույց տալիս նոր սերունդներին:

Ժամանակի հասարակական ու գեղարվեստական մտքի և մանավանդ երիտասարդության վրա աբովյանական ներգործության առաջին տեսանողը եղավ Մ. Նալբանդյանը, որն Աբովյանին արժևորեց որպես ազգային վիպասանության հիմնադրի, փորձեց բացահայտել ժողովրդի լեզվով ժողովրդի համար գրված հենց եվրոպական իմաստով այդ վեպի և վերնագրի խորհուրդը, և բովանդակային հարստությունը, և կերպարների, արծարծած հիմնախնդիրների ու արվեստի հետ կապված տարբեր հարցեր՝ արժևորելով աբովյանական ավանդները՝ իբրև հայ գեղարվեստական մտքի կարևոր ուղեմիջներ ու խթանիչներ: Բնավ պատահական չէ, որ Պռոշյանը մի գիշերում հափշտակությամբ կարդացել ու սկսել էր վերընթերցել նոր լույս տեսած «Վերքը» և նրանով ներշնչված՝ գրել իր «Սոս և Վարդիթերը», հետո էլ բեմադրել էր «Վերք Յայաստանին» խաղալով Աղասու դերը: Ղ. Աղայանը «Արություն և Սանվել» վեպում գրեթե կրկնում էր «Վերքի» գաղափարական ու գեղագիտական հարցադրումները և նույնիսկ էջերով քաղվածքներ էր բերում այդ վեպից, իսկ Պատկանյանի ու Բաժֆու կերպավորած հայ ազատամարտիկները Աբովյանի Աղասու կրտսեր եղբայրները կամ թոռներն էին: Վրթ. Փափազյանն իր «Սոխակի տղան» վեպում ոչ միայն ջանացել է ստեղծել Աբովյանի հերոսի կրկնատիպը, այլև, գայթակղությանը չդիմանալով, իր հերոսին նույնպես անվանել է Աղասի:

Քրիստոնյա հզոր տերության Ռուսաստանի հովանու ներքո Անի մայրաքաղաքով հայրց պետականությունը վերականգնելու երազանքով այրվող Աբովյանն էր, որ Յայաստանը պատմաաշխարհագրական հասկացությունից վերածեց գեղարվեստական կերպարի և սերունդների գիտակցության մեջ այն նյութականացրեց որպես համայն հայության հայրենիք: Հ. Թումանյանը, Աբովյանից ստացած գրական ներշնչումներով, նրա այս հայտնագործությամբ ոգևորվելով, հատուկ պատմաբանասիրական մի ծավալուն ուսումնասիրություն է գրել «Երևանի պատերազմը և Աբովյանի «Վերք Յայաստանին» խորագրով, որի էջերում ցույց է տվել, թե ինչպիսի ճշգրտությամբ են արտացոլված 1826 – 28 թթ. ռուս – պարսկական պատերազմի իրադարձություններն Աբովյանի վեպում:

1930 - ական թթ. մթնոլորտում Ե. Չարենցն ու Ա. Բակունցն իրենց այնքան հոգեհարազատ զգացին Աբովյանին, այնպես համզգացին նրա ազգային երազանքները, մարդկային տառապանքներն ու ողբերգությունը, որ առաջինը գրեց Աբովյանի կյանքի վերջին դրամատիկ գիշերը հանճարեղորեն պատկերող «Դեպի լյառը Մասիս» պոեմը, երկրորդը՝ «Խաչատուր Աբովյան» վեպը, որից, ցավոք, միայն հատվածներ են պահպանվել:

Ստ. Ջորյանը երկու մեծ պոեմ էր ընդունում հայ գրականության մեջ. մեկը՝ Նարեկացու «Ողբերգության մատյանը», մյուսը՝ Խ. Աբովյանի «Վերք Յայաստանին»: Հորհ. Շիրազի համար Աբովյանն իսկական բանաստեղծական ներշնչանքի աղբյուր էր. բավական չէ, որ 1940 թ. (այն ժամանակներում «Վերքի» գրության տարեթիվը համարվում էր 1840 թվականը) իր բանաստեղծական ստվար ժողովածուն Աբովյանի նմանությամբ խորագրեց «Երգ Յայաստանի», նա «Արծան Աբովյանին» ձոներգն ու «Վերքի» «Ձանգի» հավելվածի ներշնչանքով՝ «Հրագդան» սքանչելի պոեմը գրելուց հետո էլ ամեն տարվա մեջ ուներ առանձնանալու և «Վերք Յայաստանի» կարդալու հատուկ օրեր, այդ պարտադիր արարողությունից հետո մեծ ոգևորությամբ «Վերքից» արտասանում էր ամբողջական հատվածներ՝ բնորոշ մեկնություններով:

Ինչպես տեսնում ենք, մեր նոր ու նորագույն գրականության զարգացման ընթացքի հետ անխզելիորեն միահյուսված աբովյանական ավանդների դրսևորումները գրական ազգակցության տեսակետից ուսումնասիրելն ու արժևորելը արդիական անհրաժեշտություն է: Առաջադրված խնդիրներն ունեն նորովի քննության ու մեկնաբանության կարիք, և այս զեկուցումն էլ ընդամենը մի ստեղծագործական ծրագիր է:

#### **Գրականություն**

1 **Խ. Աբովյան**, Երկեր, «Յայ դասականների գրադարան», Եր., 1984, էջ 291:

2 Նույն տեղում, էջ 291-292: